Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻՄ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«03» 12 20/7թ.

# ԿԱՐԳ
## ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույնով սահմանվում է **Ավանդական բժշկության համալսարանի** (այսուհետ՝ Համալսարան) դասախոսների խրախուսման գործընթացի կազմակերպման կարգը:

1.2. Համալսարանի դասախոսների խրախուսման գործընթացը իրականացվում է «ՀՀ կրթության մասին» օրենքի, ԱԲՀ-ի կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների պահանջներին համապատասխան:

1.3. Դասախոսների խրախուսման գործընթացը կազմակերպում է Որակի ապահովման հանձնաժողովի կողմից:

1.4. Սույն կանոնակարգը սահմանում է դասախոսների խրախուսման ողջ գործընթացը, նրա կարգավորման ենթակա խնդիրները:

### 2. ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1. Հանձնաժողովը իր հերթական նիստերում քննարկում է դասախոսների խրախուսման վերաբերյալ ֆակուլտետներից ստացված միջնորդությունները և կայացնում է համապատասխան որոշում, որը այնուհետև ներկայցվում է Համալսարանի ռեկտորի հաստատմանը:

2.2. Որոշումներ կայացնելու ժամանակ հաշվի է առնվում հետևյալ չափորոշիչները՝

- մասնակցել է որակավորման բարձրացման դասընթացներին,
- ընդգրկված է կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- մասնակցել է ամբիոնային ուսումնական գործընթացների բարելավմանը,
- տարվա ընթացքում մշակել է առնվազն մեկ առարկայական ծրագիր,
- ակտիվորեն մասնակցում է Համալսարանում կազմակերպվող գիտագործնական և հետազոտական աշխատանքներին,
- նախաձեռնում և մասնակցում է Համալսարանի հասարակական կյանքին և կազմակերպչական գործունեությանը,
- ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքով ստացել է բարձր գնահատական,
- կոլեկտիվի կողմից գնահատվել է դրական կողմերով:

## 3. ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

3.1. Դասախոսական թափուր տեղերի համար մրցութային կարգով հիմնականում ընդունվում են երիտասարդ, օտար լեզվի և SS իմացությամբ դասախոսներ, որոնց տրվում են լիարժեք հնարավորություններ զբաղվելու գիտագործնական և հետազոտական աշխատանքներով:

3.2. Բոլոր դասախոսներին հնարավորություն է տրվում մասնակցելու որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացներին անհրաժեշտությունից ելնելով:

3.3. Հնարավորություն է ընձեռվում ընդգրկվելու կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

3.4. Դասախոսների կողմից իրականացվող ինքնակրթությունն ու գիտամանկավարժական գործունեությունը գնահատվում և խրախուսվում է: Այդ նպատակով նրանց տրամադրվում են լաբորատորիաներ, արհեստանոցներ, ֆինանսական միջոցներ և այլ օժանդակ հնարավորություններ:

3.5. Համաձայն Համալսարանի ներքին կարգապահական կանոնների դասախոսը աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, անբասիր աշխատանքի և նորամուծությունների և այլ ձեռքբերումների համար կարող է խրախուսվել հետևյալ կարգով՝

- գրավոր շնորհակալության հայտարարում, կցված անձնական գործերին,
- միանվագ դրամական պարգևատրում,
- հուշանվերներով պարգևատրում,
- կարգապահական տույժի հանում, եթե այդպիսին եղել է,
- լրացուցիչ վճարի տրամադրում:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգի ընդունումը և նրանում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կատարվում են Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ: